

ՎԱԶԱԳԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԲ ԽԶԲՔՈՒՄ ԵՄ...

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-3 Մանուկյան
ԳՄԴ 84 (5Հ) - 4
Մ 283

Խմբագիր՝ Նարինե Գալոյան

Մանուկյան Վաչագան
Մ 283 Երբ խզմզում եմ... / Վ. Մանուկյան. - Եր.:
Արմավ, 2017. - 88 էջ:

Գրողը գեղարվեստորեն պատկերում է մեր ժամանակների իրականությունը: Պատմվածքների և վիպակի հիմքում ընկած են երիտասարդ մարդու կյանքի տարբեր դրվագներ, առօրյան ու մտորումները, որոնց միջոցով բացահայտվում է անհատի հոգու մաքառման և իրականության թելադրանքի բախումը:

ՀՏԴ 821.19-3 Մանուկյան
ԳՄԴ 84 (5Հ) - 4

ISBN 978-9939-863-78-8

© Մանուկյան Վաչագան, 2017
© «Արմավ» իրատարակչություն, 2017

ԲԱՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Երկու խոսքի փոխարեն՝ պիտի մի քանի խոսք գրեմ ավելի ընկալելի լինելու համար: Պիտեմ երբ ընկալելի չես, հետաքրքրանում ես նաև, բայց հանուն հանունի, պիտի փորձեմ հենց սկզբից կոտրել այդ հետաքրքրություն ասվածը, որը իմ իրականությունը տեղափորելի կդարձնի Ձեր աշխարհում: Ես հիմնականում «խաղում եմ» ուժի, չկամության, խավարի և լոյսի գործիքներով: Իմ հեքիաթում անգամ չարը բարիանում է, և խաղաղությամբ են բաժանվում հերոսները: Դա գալիս է լուսավոր, պայծառ լուսաբացի հավատից, որը շրջում է ներկայում՝ լցնելով ապագան հավատի գոյներով...

Իմ արարումներով ես միշտ չկամությունը իր տեսքով նրբորեն փորձել եմ տեղադրել կերպարի մեջ ու տարածել այն գործում: Հավատը, ուժի դրսնորումը հենց սիրո մեջ է: Երբ տեսնում ես, որ հերոսին փորձում է պարտության մատնել ժամանակը, դու մոտիվացնում ես քո ընկալումներով մյուս հերոսին և մյուս նրան քո ստեղծած կյաքի այդ տարածության մեջ որպես փրկիչ: Հանուն սիրո լինում է գնալ դեպի կյանքի՝ քեզ համար փակ հանդիսացող սահմանների բացման ինքնազորությանը: Ինքնազորության ծանապարհին ինքնամաքրվում ես: Սիրո հիմքն ունենալով՝ ինքնամաքրվում է ներաշխարհի և հանուն դրա՝ իրականանում այդ անսպասելի սիրագործությունները: Զորավորների կողմից փրկության սիզակները երբեք չեն նետվում հենց այնպես: Դրանք ապտակներ են՝ ուղղված չարակամությանը: Լոյսը և իր ուժը երբեք չեն դառնա գեղեցիկ, երբ իր կողքին չեն ունենում խավարի ներկայությունը...

Խավարը լոյսի գորությունը բացահայտելու միջոց է: Ե-կեք ընդունենք՝ թուլությունը, չկամությունը ինչպես կյանքում,

ՎԱԶԱԳԱԾ ՄԱՍՈՒԿՅԱԾ

այպես էլ գրականության մեջ չսիրվող (բայց) «զարդեր են», առանց որոնց թե՛ գրականությունը և թե՛ կյանքը կկորցնեին իրենց հետաքրքրությունը: Եթե գտնում ես լուսի ու խավարի գոյների ձուլման ծիշտ մոտիվներ, ուրեմն գործդ միանշանակ ստացված է:

Չչարաշահելով Ձեր հանդուժող համբերությունը՝ կխնդրեմ մի բան. գովքի փոխարեն՝ փորձեք առողջ քննադատությամբ ավելի զորացնել հեղինակին: Ես ունեմ խորհուրդների կարիք: Ինչպես իմ կյանքում, այնպես էլ իմ գործում, թերություններով եմ ներկայանում ես...

Ձեր խորհուրդները սիրով կկարդամ vachag.manukyan@gmail.com էլեկտրոնային հասցեին ուղղված նամակների միջոցով:

Խնդրել չեմ սիրել, բայց սիրով կյանքիս հետագա ընթացքում ևս պիտի խաղաղություն խնդրեմ տիեզերքի ձարտարապետից, հայոց երկնակամարի պահպանման ու բարօրության համար...

Առանց վերապահումների՝ շնորհակալ եմ...

Վաչագան Մանուկյան

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՐԿԱԾՆԵՐ, ԿԱՄ ՈՒՂՂԱԿԻ՝ ԱՐԴԵՆ ՈՒԾ Է...

(Վիպակ)

- Էլ ինչ մնաց աշխարհում սիրուն:
- Երկի էսօրվա՝ դատարկություն թվացող գեղեցիկ բանե-
- րը:
- Բայց...
 - Մի օր կկարոտենք մարդկանց էլ, էս «անծիր» աշ-
 - խարին էլ:
 - Ինչի՞ Վերանդամ ենք:
 - Չէ, Վերացնում ենք:
 - Ասում եմ՝ Էդ ինչ կյանք ես անում, որ...
 - Սիրուն:
 - Ո՞ւ:
 - Ու ինչպես էն հեքիաթում.. սերունդների հաղթանակնե-
 - րով է ժամանակը արժևորվում և դառնում պատմություն:
 - Իսկ պատմությո՞ւնը...
 - Պատմությունն էլ, հաղթական վիճակների մեջ ամփոփ-
 - վելով, դառնում է սերունդների պատմելիք:
 - Հա, էս ժամանակներում համաշխարհային պատերազմ-
 - ներ մինչ օրս դեռ չեն եղել, փառք Աստծո, բայց հեղափոխու-
 - թյունների, հոգու խեղդամահ անող նողկալի վիճակների
 - ականատեսն ենք:
 - Զգիտեմ, բարու, չարի խորհրդավոր թվացող այդ գոյա-
 - պայքարում ես էդպես էլ նրանց դեմքը չտեսա: Հավատիս մեջ

ՎԱԶԱԳԱԾ ՄԱՍՈՒԿՅԱԾ

տկարացա, բարիացա, խառնակ վիճակներից տեղս կորցրի, բայց ոչ մեկին զգացի, ոչ էլ՝ մյուսին...

-Բա պայքարը...

-Պայքար: Եթք ընդդիմության ինստիտուտը փորձում էր աշխարհում կայանալ, պալատներում նրա մահվան օրն էին որոշում:

-Չհավատաս: Ինչ տեսնես, շոշափես կյանքում, չհավատաս, դու տեսց ապրի:

-Ինչ սիրուն են խարում ձեզ...

Հեղափոխական հարթակներում հայտնվող ապագա պորտֆելավորների սրտաձմիկ ծառերի նկատմամբ ժողովուրդը հավատով էր լցված: Խարեւությունից, կեղծիքներից ծովից ծով հայրենիքը դարձել էր շրջափակման մեջ գտնվող անծով մի հողակտոր: Մարդկանց ոտքի տակից փախչելով՝ հայրենի հողը տեղը զիշում էր օտարությանը, իսկ պալատականները դռներն էին լայնորեն բացում Հայաստան ժամանող համաշխարհային պոռնիկների առջև:

-Ես գնացի, լավ մնա:

-Դնա: Դնա ընկերներիդ հասիր, Գո՛ւգ ջան: Առանց քեզ էլ ինչ հանրահավաք, կամ հեղափոխություն:

Մարդկության անեծքները անողոքաբար դարեր ի վեր շարունակ թափվում են քաղաքական դաշտի ազգուրացների վրա՝ հասնելով նրանց սերունդներին: Անուրանալին ուրանալի էր դառնում ակնթարթում: Այդ անիծված կարողությունը «գորությունն էր» իրենց, իսկ սուտը՝ հավատը առ (իրենց) Աստված: Ժողովուրդների երազանքները կոշիկների հետ մաշվում-գնում էին: Ամեն հանրահավաք գալով տանում էր ապագայի հետ կապված գեղեցիկ լուսաբացը: Շարունակ վեր մագլցող հայացքները վերջնականապես սպանել էին շնչավոր բջիջները: Գուրգենի մոտ հավատս կորցրած մեկն էի, բայց ավելի լավ էր չհավատալ ընդդիմությունների հյուսած

ԵՐԲ ԽԵԲԵՌՈՒՄ ԵՄ...

«զեղեցիկ» հայրների մեռած պատկերներին, քան հավատալով՝ երազանքներս իրենց լծացած խոսքից գոյացած մեռած պատկերնեռում խեղդել:

Անելու բան չունեի: Ինտերնետային իրականության մեջ ապրելով՝ որոշեցի հետաքրքրությունս բավարարելու համար գնալ ինտերնետ ակումբ՝ համոզվելու, թե որքան եմ ետ մնացել իմ ներկայից: Հենց առաջին պատահած ակումբը ներս մտա. լեփ-լեցուն էր սրահը: Չեմ մառանա, երբ ինտերնետ ակումբի աղմինհստրատորը բարյացկամ ժայռով խորհուրդ տվեց ինձ մի չատ, որտեղ տարբեր տեղերից մարդիկ էին մուտք գործում: Նրա խոսքով՝ բոլոր էգերն էլ, անգամ մտացածին չկալողները, շատ ջիգյարով են քոնը դառնում, եթե ժամանակ ես տրամադրում: Զատ մտնելուն պես անունները սկսեցի կարդալ, որոնք գուցե իրական կյանքի ընթացքը չընկալելով էին էստեղ: Աչքս ընկավ «Դուք գիտ եք» կեղծանվանը: Սա կամ տղա էր, որ, ըստ երևույթին, փորձում էր իր ինքնատիպ անձաշակությամբ աղմինհստրատորի ասած էգերին կպցնել, կամ ուղղակի ցանցառ աղջիկ, որ կարողացավ ուշադրությունս գրավել: Ինչևէ...

«Բարե, անհայտ բաժանորդ»:

«Ի՞նչ գոյն ես սիրում», - հարցրեց նա:

«Սև էլ, սպիտակն էլ կյանքից են: Ընդհանրապես գոյներն իրենց ծայրահեղ տարբերությամբ եմ սիրում»:

«Դե, ուրեմն՝ սև ու սպիտակ արև քեզ, իմ նորաթուխ օգտատեր»:

Նորաթուխ բառից կարելի էր ենթադրել, որ չատի հինքնակեցվածներից մեկն է: Զգացվեց իգական սեռի պատկանելը (թեև չէի բացառում նաև «ռոմանտիկ» արվամոլ լինելու տարբերակը):

«Բա ո՞նց սրան կապվեցիր», - հարցրի ես:

«Չգիտեմ: Կյանքիս անորոշությունից երևի»:

«Մարդը սխալն ընդունելով է մարդանում: Ուշ չէ»:

«Հո կուսակրոն չես: Հլը ծիշտն ասա»:

Ուղարկված նամակի մեջ նաև ժպիտներ կային: Ես էլ՝ չորոտ արձագանքեցի, որ ոչ:

«Եկած-չեկած քարոզ ես անում, կյանքի դասեր տալիս: Մոլորակիդ տեղին ես խառնել, պարոն անցորդ»:

«Դեռ էս գլխից չեմ շփոթել մոլորակս, բայց դու...»:

«Ի՞նչ ես...»:

«... Քո համար թուլության ուժերով արարված անորոշության մեջ ես կորցրել քեզ»:

«Կորցրել եմ՝ գտի...»:

«Կգտնեմ...»:

«Ինչքան ժամանակ ա՝ գրվում ենք»:

«Տասը րոպե կլինի»:

«Չարմացրի՛ր, կուսակրոն բարեկամ», - կրկին ժպիտների շարանի հետ ուղարկեց իր հերթական նամակը:

«Ու քեզ ի՞նչը զարմացրեց, աննորմալների մոլորակի նորմալ քնակչուիի»:

«Տասը րոպեի ընթացքում չատի ոսկի կանոն դարձած խոսքը չգրեցիր»:

«Նոր եմ, կսովորեմ»:

«Չէ: Նորի ու ինի հետ կապ չունի: Նորածինն ի վերուստ ունի սնվելու կողը, էղանս էլ էդ ապուշների մեջ ոսկե կանոնն է միված»:

«Կգրես կանոնը»:

«Գրեմ. Վիրտ անենք. իիմա հասկացա՞ր»:

«Պարզ է»:

«Ի՞նչն է պարզ»:

«Կեղծանունդ»:

ԵՐԲ ԽԵԲԵՌՈՒՄ ԵՄ...

«Հայ»:

«Իսկ ես կարծում էի, թե աղջիկ ես, ուրեմն՝ ցանցառ»:

«Բարձր կարծիք ունես»:

«Էլ մի»:

«Էլ չեմ»:

«Ժամանակդ սպանում ես»:

«Իներցիան է...»:

«Ընթացքը չես զգո՞ւմ»:

«Կիսով չափ՝ հա, կիսով չափ՝ չէ»:

Եվ այս կիսով չափ իրականության մեջ զանգահարեց գրող ընկերս.

-Ո՞ւր ես դու, եղբայր շան:

-Որ ասեմ՝ չես հավատալու, լավ կլինի՝ չիմանաս:

-Մխվելու եմ ժամանակի մեջ, քեզ էլ հետս եմ մխելու հավերժ:

Ոգևորված խոսքից միանշանակ երևում էր, որ նորություն ունի:

«Հոգնեցրի», - հարցրեց ինտերնետային ծանոթուիիս:

«Սպասիր, ընկերոջս հետ եմ խոսում, վերջացնեմ՝ կգրեմ...»:

-Նորություն ունեմ,- հարցրի ես:

-Էն էլ ինչ նորություն. վեա եմ գրել, ախատերս:

-Ապրես, կկարդամ:

-Ուզում եմ՝ խմենք:

-Եվ կխմենք...

-Գործերդ վերջացնես՝ զանգիր:

-Շատ լավ...

Սա էլ պատմության մեջ հավերժության ուղիները հավերժ փնտրող գրող-թարգմանիչ Նորայրն էր:

«Վերջացրի, ստեղ ես»:

ՎԱԶԱԳԱԾ ՄԱՍՈՒԿՅԱԾ

«Հա, բա ին կեղծանվանս մենակ չեմ թողինի: Քեզ հետ,
էն էլ՝ մենակ»:

«Գևամ ես...»:

«Գևա: Կխոստանա՞ս, որ կշարունակես սիրել կյանքը»:
Առանց մտածելով՝ արագ պատասխան գրեցի.

«Կսիրեմ»:

«Դե, ուրեմն լավ մնա»:

«Կայքի հասցեն մոտս կգրեմ»:

«Բա որ ասում եմ մեր մոլորակից չես: Կայքի հասցեն
գրելս ո՞րև է: Հիմա համարներով փոխանակվելու ժամանակ-
ներլ են, սիրելիս»:

«Խսդիր չկա. գրի համարդ»:

«Փշտ...»:

«Էս ընթացքն էլ փշտ..»:

«Շաբաթվա նախավերջին օրվան բան չմնաց: Պիտի
Երևան գնամ: Առավոտյան 10-ին գործերս վերջացրած կլի-
նեմ, 10:30 կարող ենք հանդիպել Կարապի լճի մոտ»:

«Ու ո՞նց ձանաչեմ...»:

«Քո խնդիրն է: Կգամ...»:

«Անմիջականությունդ ապշեցուցիչ է»:

-Նորայր:

-Հա ջան:

-Դե գնանք գարեջուր խմենք, համ էլ գործիդ մասին
գրուցենք:

-Շատ լավ:

Նորայրի աչքերում հպարտությունն էր իշխում: Ուրախ
եմ ընկերոջ համար, որ գոնե իր վեպից էր կորցրել ինքնա-
գիտակցությունը: Տեր, ծառա չտարբերող մարդկանց իրակա-

ԵՐԲ ԽԵԲԵՈՒՄ ԵՄ...

Նույրունում, հուրախույրուն բոլորիս, շարունակում էր ապրել (հոգևարքի մեջ գուցե) նաև ժամանակակից գրականությունը:

-Զգիտեմ, եղբայր, չգիտեմ:

-Ի՞նչ չգիտես, Նորայր:

-Մարդկանց ուշքը մնաց դասականության վրա: Ապրող գործ ենք տալիս, հերիք չի՝ մեզ անդրադարձ չանելով՝ էլի դասական են ասում...

-Ա՞յս, դու էդ չես հասկանում, ի՞ւ: Բա Սահյանի, Զարենցի, Թումանյանի ժամանակներում տեսնես ո՞ւր էր մարդկանց ուշքը:

-Գնամ մեռնեմ, որ հավեսով սիրվեմ, չ՞:

-Չէ: Համ էլ Զարենցից ինչնվ ես առավել:

-Առավելության մասին խոսք չկար: Ա՛րմ, արձակ գրեմ, չափածոյի մեջ լինեմ, թարգմանություններ անեմ ու էսքանից հետո էլի՞ անտեսվեմ:

Իր գրին սիրահարված՝ ընկերս շնչակտուր արտաքերում էր նախադասությունները: Նա, չզգալով հարցիս նրբությունը, խոսում էր անտեսվածության մասին՝ մոռանալով այն զըրկանքներն ու տառապանքները, որ ապրել ու տեսել են հենց իր ակունքները...

-«Կորսված քամիներ» պատմվածքում 37 հայինյանք հաշվեցի: Հիմա ինքնատիպ երևալու համար ես գրեմ, թե՛ ընթերցողիդ ուզում ես ասել, որ գրողներն էլ հայինյել գիտեն:

-Հայինյանքը,- զարմացած հարցրեց նա:

-Հա, անտեղին, գործդ միտոռոյ, դատարկ պարունակությամբ համեմված էն հայինյանքներդ՝ քեզ «կատարելության» մղող:

-Ա՛յ Արման ջան, գրողը պիտի ժամանակի շունչը զգա: Հո Վահան Տերյանի ժամանակներում չենք մնալու:

-Ինչի՞ Վահան Տերյանի ժամանակներում ապուշների գոյությունը արգելվի՞ւմ էր:

-Լսիր:

-Դու ընդամենը ապուշների, ղգիկների ընթերցողների պարտադրած ճաշակին ես տուրք տալիս, մեղքն է՝ զցում ժամանակի վրա: Քեզ ստելով՝ ժամանակները չես զարգացնի:

-Լավ էլի, Արմ..

-Քո իրականությունից կյանքի երկու օրինակ կբերեմ. հարևանս՝ Գագիկը, 36 տարեկան ազապ տղա լինելով, նեղվում էր մարդկանցից իրեն՝ հոր կնքած անվամբ կոչելու համար: Ես «հանձարը» անընդհատ կրկնում է՝ «ախայերությունը Գագասիկ է ասում, յանի խի՞ չեք տեղավորվում»: Ու երբ հանդիպում ենք, հասցնում էր անցնող-դառնող աղջիկներին, կանանց իր մտքի անսահաման «զարդերով» նախշել: Օրինակ՝ «Վախ, էս ինչ լավ ոռ ոննի, ախայեր», կամ՝ «Հլը սրա թունավոր աչքերին տես, ինչ լավ քածի աչքեր ոննի բայց»:

-Է, հա՛, էդ ապուշի օրինակը որպես ինչ ես բերում:

-Լավ, անցանք առաջ...

-Չէ, լսում եմ քեզ:

-Նմանատիպ հիմար բաներ, երբ խոսում էր կանանց ետևից, մի օր ինքն իրեն չհարցրեց՝ հնարավոր է՝ էս կինը երեխաներ ունենա, ամուսին: Չհարցրեց, որովհետև իր մոտ ոգու սով էր: Լճացած ոգին մարմնի մեջ նեխում էր: Բայց էլի օրինակ կա՝ Վարդան պապը. մի օր խմում էինք, աչքերը լցրեց, հայացքը ինձ հառեց: Երկար լրելուց հետո ասաց. «Բալես, իմ բախտը բռն էր, բոլորին տալով՝ գնաց, ինձ նայեց ու հեռացավ...»:

-Գիտե՞ս՝ Մարկեսն ասում էր...

-Հրանտն էլ էր ասում, Նորայր, -լրեցրի ընկերոջս:

Օտարությունը գրկած ընկերս, լրեցնելուս պատճառը ընկալելով, ժպտաց, հետո խորհրդավոր հայացքով հարցրեց.

-Ի՞նչ էր ասում Հրանտը:

-Ասում էր. «Եթե մարգարեներ չենք գալիք ժամանակնե-

ԵՐԲ ԽԵԲԵՌՈՒՄ ԵՄ...

րի, գոնե մեր ժամանակների մատենագիրները լինենք, մեր ժամանակների վավերագրողները լինելու քաջություն ունենալը»:

- Դիպուկ էր, բայց ես նրա գիրը չընկալեցի:
- Սևանի միջից որ իշխան բռնեինք, ինչ կանեհիր:
- Էն վերաց՞ղ...
- Հա, էն վերացող...
- Էդ հարց ա՞...
- Եթե երկու տարեկան երեխային տաս, ինչ կանի:
- Փշերից կխեղովի:
- Բայց կզգա՞ համը:
- Ավելի շատ՝ ցավը:
- Սևանա լծի փշոտ, համով, քո ասած էն վերացող իշխանը Հրանտն ա: Եթե հոգով չափահաս չենք, նրա փշի ցավը պիտի ծաշակենք:
- Ճիշտ ես: Համաձայն եմ, անուններ ունենք, բայց նրանցից շատերին կարելի է հանգիստ միջակություն էլ որակել:
- Կայտառ, ուժեղ երիտասարդ ես ու քնից արթանալիս ինքնուրույն էլ վեր ես ելնում, չ՞...
- Է հա:
- Երբ ծերությունը, կյանքի բոլոր գոյներն իր մեջ առած, գա մոտդ, դու ետ հայացք գցիր...
- Ո՞ւ...
- Ու կտեսնես ժամանակի շնչով ողողված, գիրդ մերժող բազում ջահելներ, որոնք դեռ քեզ պես ժամանակ կունենան տուն վերադառնալու...
- Հըմ...
- Գրական աշխարհի ըմբռստ որդիներդ իրենց լուսաբացը փնտելու ժանապարհին, իրոք, հնարավոր է՝ քեզ նաև թեռ համարեն: Քարեր կգան վրադ: Բայց կգա քարերը հավաքելու ժամանակը: Այդ քարերից մեծ ամրոց կսարքեն ու քեզ ամրոցի հավերժ բնակիչը կդարձնեն:

-Մտքերով ընկա:

-Գոնե հիշում ես ժողովրդի ձեռքի՝ արխիվում պահպանված ծաղիկները, մարդկանց պարզ հայացքները՝ գրողին հառած: Ազգային արժեքներն են. թոյլ են, թերհաս են, տկար են՝ մերն են. մեր ունեցածն էլ էս ա:

-Դե հիմա նախագահներն իրենց նախընտրական արշավների ժամանակ կարողանում են 100 մարդու ներկայություն ապահովել, բայց անկեղծ ներկայություն, հա...

-Նորայր, լսիր: Հսկա Ռուսաստանում մի Պուչկին, Դոստոևսկի, Տոլստոյ չծնվե՞ր: Էս ոտքով շրջելի հայրենիքից ինչ ես ուզում: Էն էլ էն հայրենիքից, որի գրականության մեջ աշխարհի փրկության բանաձևը պարզ գրված ա:

-Զգիտեմ: Պապս երբ իր ժամանակներից էր պատմում, հիմանում էի: Իր շրջանի աղջիկների մեջ ամոք կար գոնե, բա հիմա: Է, ձեր շրջանն էլ, ձեր շրջանի բողերն էլ,- կասեր պապս:

-Պապդ իր սերնդի բողերին բացահայտել չկարողացավ, հիմա իմ սերնդի անքող բողերից ինչ ա ուզում:

-Էս իրականութեանը չսիրեց:

-Ժամանակին սիրում էր, որովհետև կյանքի ընթացքներում կար: Հիմա չի սիրում, քանի որ ընթացքներում էլ չկա. իրեն դիտորդ դարձրեց ու...

-Հևարավոր է:

-Բա...

-Մեր գրուցներից նոր կերպարներ են ծնվում իմ մեջ:

-Կյանք տուր:

-Անպայման: Գևամ, քանի կրակը չի մարել:

-Գրելու հենց ձիշտ ժամանակն է, գևա, ընկերս:

-Ընորհակալ եմ շատ...

-Ես եմ շնորհակալ:

Լիցքաթափվելու կարիք էի զգում: Ճանապարհն ինձ հասցրեց «Ատլանտիկ» ակումբի մոտ: Թանգարանային կարգավիճակ ունի այս ակումբը: Մարդկային տարբեր, զանազան տեսակների հավաքատեղի է: Ներս մտնելու պես նկատեցի «Կայֆում» երգի ներքո մարդկային շարժումներին խորթ, ձեռքի, ոտքի, գլխի անհասկանալի շարժումներով Գագասիկն էր պարում: Զգացվեց հոր աշխատած փողերի «հոտը»: Ինձ նկատելուն պես միանգամից բղավեց.

-Է՞ն ում ախպերն ա,- և ոգևորված շարունակեց,- հլը ձեն-ներդ, արա:

-Դու տեսուց էլ փող ծախսել չսովորեցիր:

-Հային մորսասսս պայծառոռոռ արևնենեն... Էլի սկսվեց, արա: Էնքան գիրք որ կարդում ես, կարո՞ղ ա տեղդ գերեզմանը չի, թե՞ քո հմար սպեց տեղ ա պահած, ապե՞ս: Մի անգամ ենք, արա, կյանք գալի: Ասել մեր Փաշիկ ախպերը (լավ երգ ունի, է), էն, որ ասում ա՝ կյանքը քաղցր է, մարդիկ, հասկացեք, դաժան մի՛ եղեք:

-Ի՞նչ ես ասում, է: Բա, Գագասիկ ջան, էդ «հզոր» երգի էմոցիոնալ բառերը որտեղից գտնենք:

-Ի, ախպորդ մոտ էնքան դիսկ կա Փաշիկից, երբ ուզես, բա արի տամ, լսի, ախպե՞ր:

-Հայվ, դե, ես գնամ, Գագան, թեզ՝ ուրախ ժամանց:

-Ինչ գնան, ինչ բան: Հեսա ցկում ենք ապեեեեն, իրար հետ, ախպերս, ցկումմմմ ենքքքքք: Այոռոռո՞՞՞:

-Գագան ջան, դու հանգիստ ցկա, ես գնամ:

-Հլը էն ծտին տես, որ պոռշները բաժակին հազցրած՝ գինի ա կոնծում ու իրա քած հայացով մեզ նայում: Դու կա-

ՎԱՂԱԳԱԾ ՄԱՍՈՒԿՅԱԾ

րան գիշերը քնես, եթե սրան չփորձարկես,- շարունակեց Գագասիկը:

-Արա, իորդ Աստծուն մեռնեմ, գնա գործիդ էլի, Գագան շան...

-Է: Ախապերս, լսի, կառոչի էթում ես, թեթև թևից քաշում, ասում ես՝ ծիտիկ, պամադեդ շատ ես քսել, իու դու չտես չես, ազ'իզ, խանգարելու ա:

-Չէ հա:

-Հա, ու մեկ էլ՝ կարդացածդ գրքերի՝ դարն ապրած բառերը չասես, թե չէ կղճժա վրեդ, մտքի մեջ էլ կասի՝ էս յակըոն հվ էր, արա:

-Ապեր...

-Զոկիր, չէ... պտի ցնցես էգին, ոչ թե նայնամ-նիմնիմ...

-Տեսց ցանկացածին ես բռնում, հա՞:

-Հա: Բա հնց էլ, ապե...

-Ես էլ ասում եմ՝ էս դեմքիդ զարդերը տեսնես ինչ ծագում ունեն:

-Ի՞նչ..

-Դե, էս կոիվ կիսոներդ, որ ում տեսնում, պատմում ես, էլի...

-Ապե, ուսց ջոկի, ծտից ուխոդ ես ըլնում, հա՞: Վախեցար՝ բոմբին տարածքումդ փորձարկես, կքանդի, չէ:

Ինքն իր դատարկ կերպարով տարված, իրենից գոհ՝ ամբախ-զամբախ խոսում էր նորին փայլատակություն Գագասիկը, ում համար բարոյականն ու անբարոն նոյն հարթության վրա էին: Սրա ու նմանօրինակ երևոյթների համար իրենց մորից, քրոշից բացի, մարդկությունը արժեք չուներ:

-Ինչքան էլ ու ում կողմից էլ կյանքում քանդվեմ, քո ավերածություններին չեմ հասնի, Գագան շան... Գնացի, լավ մնա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ.	3
ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՐԿԱԾՆԵՐ, ԿԱՄ ՈՒՂՂԱԿԻ՝ ԱՐԴԵՆ ՈՒԾ Է... (<i>վիպակ</i>).	5
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ	
ԱՐՏԱՍՎՈՂ ԵՐԱՋՆԵՐ.	54
ԴԵՐԱՍԱՆԸ.	62
ԶԱՏԵՆՔ ԻՐԱՐ.	71
ՊԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Կարեն Մանուչարյան)	81

ՎԱՐԱԳԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐԲ ԽԶԲՁՈՒՄ ԵՄ...

ВАЧАГАН МАНУКЯН

КОГДА Я ПИШУ КАРАКУЛИ...

Հրատարակության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Նարինե Գալոյան
Վերսովոգիչ Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Զևավորումը՝ Արշալույս Արզումանյանի
Հեղինակի դիմանկարը՝ Մարինե Մելքոնյանի

Դափնիր՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.5 ծ.կ.
Ծավալը՝ 5.5 տպ. մամուց
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar
Գինը՝ պայմանագրային



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Գ. Ереван, ул. Ширака 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru

Հրատարակվել է «Նովել հրատարակչություն» ՍՊԸ-ի տպագրատանը
Հասցե՝ Ք. Երևան, Մայիսի 9 փ., 23